

Եթէ Կարենայի  
Կեցնել Փամանակը

Կարդա՛  
Գ. Թագ. 10. 23 - 11. 4

Վասնզի Տէրոջը փառքը  
Տէրոջը տունը լեցուցեր  
էր:  
-Գ. Թագաւոր 8. 11

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՆԵՐ ՄԷ՛Կ  
ՏԱՐՈՒՆ ՄԷ՛Ջ  
■ Գ. Թագաւոր 10-11  
■ Ղուկաս 21. 20-38

ոգեւորուած էր: Սողոմոն թագաւոր գահ բարձրացած էր եւ սքանչելի տաճար մը կառուցանած Աստուծոյ բնակութեան համար, ուր Անոր փառքը տունը լեցուցած էր (8. 11): Ի վերջոյ, արդար թագաւորի մը իշխանութեան տակ ազգը միացուած էր եւ խաղաղութիւն կը տիրէր: Շատ կը սիրեմ ուրախալի վերջեր: Սակայն պատմութիւնը հոս չի վերջանար: Ան կը շարունակուի.- «Սողոմոն թագաւոր... շատ օտարազգի կիներ սիրեց» (11. 1), եւ այդ կիները անոր սիրտը օտար աստուածներու դարձուցին» (4. 4):

Ինչպէս տարուան եղանակները կը շարունակուին, նոյնպէս ալ կեանքի շրջափոխումները կը դառնան - ծնունդով եւ մահով, յաջողութեամբ եւ ձախողութեամբ, մեղքով եւ խոստովանութեամբ: Թէեւ մենք զօրութիւն չունինք ժամանակը կեցնելու՝ երբ անոր հաճելի օրերը կը վայելենք, կրնանք հանգիստ զգալ Աստուծոյ խոստումը միշտ մեր մտքին մէջ ունենալով, թէ ի վերջոյ գէշ ժամանակները վերջ պիտի գտնեն (Յայտ. 21. 4):

**Ա** մէն տարի երբ Մայիս ամիսը սկսի Միշիկընի մէջ, կ'ուզեմ կեցնել ժամանակը: Շատ կ'ուրախանամ տեսնելով մահուան պարտութիւնը երբ ծիւերը դուրս կու գան մերկ ճիւղերուն վրայ: Մի քանի շաբաթներու ընթացքին, մերկ բնակարը կը ձեւափոխուի եւ ծառերը կը հագնին կանաչ եւ ծաղիկներով զարդարուն համազգեստ: Չեմ կշտանար գարնան այդ եղանակէն:

Նոյնպէս, Մայիսին Աստուածաշունչի ընթերցումս զիս կը հասցնէ Գ. Գիրք Թագաւորացիս: 10-րդ գլուխը նոյն զգացումը կու տայ ինծի: Կ'ուզեմ որ պատմութիւնը կանգ առնէ: Իսրայէլի ժողովուրդը

## Երկու Պատուի- րանքների Ապրելու

Կարդա՛  
Մատթեոս 22. 34-40

Այս երկու  
պատուիրանքներէն  
կախուած են, օրէնքը եւ  
մարգարէները:  
—Մատթեոս 22. 40

ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՆԵՐԸ ՄԷՎ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ

■ Գ. Թագաւոր 12-13

■ Ղուկաս 22. 7-20

Հիմնականին մէջ, Յիսուս մեզի կ'ըսէ, թէ Աստուած գիտէ, թէ Ձինք որքան կը սիրենք՝ մարդոց հանդէպ մեր ունեցած վերաբերմունքէն: Բոլոր մարդոց՝ անխտիր: Մեր ընկերը մեր անձին պէս սիրելը մարտահրաւէր մըն է: Սակայն երբ կը կիրարկենք զայն, Աստուծոյ հանդէպ մեր ունեցած սիրոյն որպէս արտայայտութիւն, մենք տեղի տուած կ'ըլլանք շատ զօրաւոր շարժառիթի մը – սիրելու բոլոր մարդոց անխտիր, անոնք արժանի ըլլան սիրուելու կամ ոչ: Եւ երբ կը սիրենք Աստուծոյ եւ մեր ընկերոջ, միւս բոլոր օրէնքները անոր մէջ կ'իյնան: Երբ ես իմ ընկերս ճշմարտապէս սիրեմ, նաեւ սուտ վկայութիւն չեմ ըներ իր դէմ, եւ ոչ ալ անոր հարստութեան կամ կնոջ կը ցանկամ: Ուրիշները սիրել Աստուծոյ սիրոյն համար, կու տայ մեզի շնորհքը նաեւ կարենալ ներելու բոլոր անոնց, որոնք մեզի ցաւ պատճառած են կամ անարդար եղած:

Մարդիկ պէտք ունին Աստուծոյ սէրը տեսնելու մեզմով – այսօր եւ ամէն տեղ:

ԶԱստուած սիրելը բանալին է ուրիշները սիրելու:

**Ա**րդեօք երբեք դուն քեզ օրէնք-  
ներու եւ ականկալութիւններու  
տակ ճնշուած զգացա՞ծ ես: Հին  
Կտակարանի ժամանակ Հրեայ  
ժողովուրդը, արդեօք ինչպէ՞ս կը  
փորձէր Հնազանդիլ աւելի քան 600  
օրէնքներու, որոնք պարտադրուած  
էին իրենց վրայ կրօնական առաջ-  
նորդներու կողմէ: Երեւակայեցէք  
անոնց զարմանքը, երբ Յիսուս պար-  
զաբանելով եւ ամփոփելով այդ  
բոլորը, անոնց յայտնեց, թէ մարդ  
մը կրնար արդարանալ միայն Հե-  
տեւեալ երկու օրէնքները կիրար-  
կելով.– «Սիրէ քու Տէր Աստուածդ»  
(Մատթ. 22. 37) եւ «Սիրէ քու ընկերդ  
քու անձիդ պէս» (Կ. 39):

## Երբեք՝ Առանձին

Կարդա՛  
Եբրայեցիս 13. 1-8

Բարքերնիդ արծաթա-  
սէր չըլլայ, գոհացէք  
ձեր ունեցածով,  
վասնզի ինք ըսաւ, թէ  
«բնաւ քեզ պիտի  
չթողում, ու բնաւ քեզ  
երեսէ պիտի չձգեմ»:  
—Եբրայեցիս 13. 5

ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆԵՐԻ ՄԷՉ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՉ

- Գ. Թագաւոր 14-15
- Ղուկաս 22. 21-46

Հին քնարական երգեր, պարզապէս քաջալերելու իրենց խումբի խաղցողները՝ վերջաւորութեան յաղթանակով զիրար ողջունելու ակնկալութեամբ:

Այս զգացումը բան մը կը նշանակէ բոլորին համար, որովհետեւէ մեզմէ իւրաքանչիւրս կը պատկանի հաւաքա-  
կանութեան մը: Մեկուսացումն ու առանձնութիւնը շատ ցաւալի մարդկային իրավիճակներ կը նկատուին: Յաւալի ժամանակներուն մեր հաւատքը պէտք ունի աւելի կենսա-  
տունակութեան:

Աստուծոյ զաւակները երբեք պէտք չունին վախնալու լքուած մնալէ: Եթէ նոյնիսկ մարդիկ մեզի երես դարձնեն, բարեկամներ լքեն մեզ, կամ պայմաններ մեզ բաժնելու ըլլան մեր սիրելիներէն, տակաւին մենք առանձին չենք (Եբր. 13. 5): Ասիկա պարզապէս քաջալերական եւ զգացա-  
կան երգ մը կամ բացականչութիւն մը չէ: Ան Աստուծոյ խոստումն է բոլոր անոնց համար, որոնք Իր սիրոյ առարկաներն են:

---

Աստուծոյ ներկայութիւնը մեզի հետ, Իր  
մեծագոյն նուերներէն մէկն է մեզի համար:

**Մ**իշտ սիրած եմ միջ-գուէճա-  
կան բարեկամական ֆուլթալի  
խաղերը: Յատկապէս կը սիրեմ  
դիտել Անգլիական Գլխաւոր Լիկայի  
խաղերը: Պատճառներէն մէկը այն  
է, որ ճարտարութիւնն ու արագու-  
թիւնը միատեղ կը յայտնուին այդ  
խաղերու ընթացքին: Կը սիրեմ նաեւ  
դիտել խաղը դիտողները՝ որոնք  
իրենց երգերով եւ բացականչու-  
թիւններով կը քաջալերեն իրենց  
նախասիրած խումբը: Օրինակ,  
Լիվըրպոլի խումբին նշանաբանը,  
տարիներէ ի վեր եղած է «Բնաւ  
առանձին պիտի չքալես»: Որքան  
յուզիչ է լսել 50,000 համակիրներ,  
ոտքի կանգնած միասնաբար կ'երգեն

Երկու Բառեր

Կարդա՛  
Յակոբ 4. 7-10

Ուրեմն հպատակեցէք  
Աստուծոյ:  
—Յակոբ 4. 7

ԱՍՏՈՒԱԾԱԵՆՈՒՆԵՐԸ ՄԷՎ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ  
■ Գ. Թագաւոր 16-18  
■ Ղուկաս 22. 47-71

**Մ**իացեալ Նահանգներու ծանուցումներու պատմութեան մէջ ամէնէն ազդեցիկ լողունգը կարելի է նկատել Գալիֆորնիայի կաթի արտադրութեան ընկերութեան մը երկու բառերով ըրած սա հարցումը:— Կաթ Ունեցա՞ր: Այս խօսքով, ընկերութիւնը գրեթէ բոլորին ուշադրութիւնը կրցաւ գրաւել:

Եթէ Կաթ Ունեցա՞ր խօսքը լաւ յուշարար մըն է մարդոց, որ կովու կաթ խմեն, թերեւս մենք ալ կրնանք ստեղծել երկու բառերէ բաղկացած լողունգներ, յիշեցնելու մեզի աւելի աստուածավախ կեանք ապրիլ: Յակոբոս Առաքեալի նամակին 4-րդ գլուխը մեզի կը ներկայացնէ չորս

ուղղեցոյցներ:

1. Հպատակեցէ՛ք Աստուծոյ (4. 7): Մեր գերիշխան Աստուածը կը սիրէ մեզ, ուրեմն ինչո՞ւ թոյլ չտալ, որ ինք դեկավարէ մեր կեանքը: Աստուծոյ ենթարկուիլը կ'օգնէ մեզի Սատանային դիմադրելու: 2. Մօտեցէ՛ք Աստուծոյ: Տրդ համարը կը յիշեցնէ մեզի Աստուծոյ մօտ ըլլալու արժէքն ու կարեւորութիւնը: Անոր մօտ ըլլալը կը գոցէ մեզ Աստուծոյ բաժնող բոլոր բացութիւնները: 3. Մաքրեցէ՛ք սրտերնիդ: 8-րդ համարը մեզի կը յիշեցնէ նաեւ մաքրել մեր սրտերը: Ատիկա կրնայ ըլլալ զղջումով եւ մեր մեղքերու խոստովանութեամբ: 4. Խոնարհեցէ՛ք Տէրոջը (4. 10): Այդ կը նշանակէ խոնարհաբար ընդունիլ մեր մեղաւոր ըլլալը եւ ներում խնդրել:

Հպատակիլ Աստուծոյ: Մօտենալ Աստուծոյ: Մաքրել Սիրտերը: Խոնարհիլ Տէրոջը: Թերեւս այս զոյգ բառերը Կաթ Ունեցա՞րին չափ լաւ չերեւին չապիկի մը վրայ գրուած, սակայն վստահ լաւ պիտի երեւին մեր կեանքերուն վրայ:

Ամէնէն զօրաւոր վկայութիւնը  
աստուածապաշտութեան կեանքն է:

## Աղօթելու Ժամանակ

Կարդա՛  
Սաղմոս 70

Ո՛վ Տէր, ինձի օգնելու  
արտորացիր:  
—Սաղմոս 70. 1

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՆԵՐ ՄԷ՛Կ  
ՏԱՐՈՒՆ ՄԷ՛Ջ  
■ Գ. Թագաւոր 19-20  
■ Ղուկաս 23. 1-25

բան մըն է:

Աղօթելու ժամանակը, անշուշտ, որեւէ ժամանակ կը նշանակէ – մասնաւորաբար երբ տազնապի մը մէջ կը գտնուինք: Վախ, մտահոգութիւն, անձկութիւն եւ հոգածութիւն շատ բնական վիճակներ են, որոնք մեզ աղօթելու կը մղեն: Երբ առանձին, լքուած եւ զուրկ ամէն տեսակի մարդկային միջոցներէ կը զգանք, բնականաբար կը դիմենք աղօթքի: Կ'աղերսենք սաղմոսերգուին պէս.– «Ո՛վ Տէր, ինձի օգնելու արտորացիր» (Սաղմ. 70. 1):

Ճան Քասիան, ճորդ դարու հաւատացեալ մը, գրած է.– «Ասիկա սոսկալի աղերսանք մըն է, մէկու մը կողմէ, որ կը տեսնէ թշնամիին ծուղակները: Պաղատանքը մէկու մը, որ պաշարուած է ցորեկ եւ գիշեր, եւ կը բացականչէ, թէ ինք չի կրնար ազատուիլ այդ կացութենէն մինչեւ իր պաշտպանը չհասնի փրկութեան»:

Թող մեր պարզ աղօթքը, ամէն տազնապի ատեն եւ ամբողջ օրուայ ընթացքին ըլլայ – Ո՛վ Տէր, օգնէ ինձի:

Չկայ տեղ մը կամ ժամանակ մը, ուր չենք կրնար  
աղօթել:

**Ե**րբ մանուկ էի, աւտու մը, նստած մեր խոհանոցին մէջ, կը դիտէի մօրս նախաճաշ պատրաստելը: Յանկարծ, տապակին մէջի իւղը՝ որով ապուխտը կը տապկէր, կրակ առաւ: Բոցերը սկսան բարձրանալ օդին մէջ ու մայրս վազեց դէպի մառան եւ տոպրակ մը ալիւր բերաւ եւ թափեց բոցերուն վրայ:

«Օգնութիւն» պոռացի: Ապա ըսի.– «Երանի աղօթելու ժամանակը ըլլար»: «Աղօթելու ժամանակն է» արտայայտութիւնը մեր ընտանիքին մէջ յաճախ կրկնուած խօսքեր էին, եւ ես բառացի իմաստով, հասկցած էի, թէ աղօթքը միայն մասնաւոր պարագաներու տակ կատարուելիք

Իմաստուն  
Մրջիւնը

Կարդա՛  
Առակաց 6. 6-11

(Մրջիւնը) իր կերակուրը  
ամառուընէ կը  
պատրաստէ, իր  
ուտելիքը հուսնաբար ատեն  
կը հաւաքէ:  
—Առակաց 6. 8

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՆԵՐԸ ՄԷ՛Կ  
ՏԱՐՈՒՆ ՄԷ՛Ջ  
■ Գ. Թագաւոր 21-22  
■ Ղուկաս 23. 26-56

Անոնք իշխան մը, վերակացու մը կամ կառավարիչ մը  
չունին (4. 7): Սակայն շատ արդիւնաբեր գործ կը կատարեն:  
Անոնք միշտ զբաղ են իրենց աշխատանքով, եթէ նոյնիսկ  
այդ աշխատանքը անմիջական կարիք մը չէ: Անոնք իրենց  
կերակուրը ամառուընէ կը պատրաստեն եւ իրենց ուտելիքը  
հունձքի ատեն կը հաւաքեն (4. 8): Երբ ձմեռը գայ, անոնք  
բնաւ չեն մտահոգուիր, թէ ինչ պիտի ուտեն: Անոնք քիչ  
առ քիչ ապահոված կ'ըլլան այնքան կերակուր, որ բաւա-  
կան կը նկատուի իրենց համար:

Կարեւոր դասեր կան մրջիւններէն սորվելիք: Երբ  
Աստուած մեզի առատ ժամանակ կու տայ, կրնանք այդ  
ատեն պատրաստուիլ գալիք «նեղ օրերուն» համար:  
Աստուած է հայթայթողը միշտ, ներառեալ մեր աշխատե-  
լու կարողութիւնը: Ժռաջան աշխատինք եւ ըլլանք  
իմաստուն տնտեսներ այն բաներուն, որոնք Աստուած  
պարգեւած է մեզի, եւ յետոյ հանգիստ զգանք իր մեզ  
հոգալու խոստումին վստահելով (Մատթ. 6. 25-34):

Վստահէ՛ Աստուծոյ – եւ պատրաստուէ՛ վաղուան  
համար:

**Ա** մէն տարի մասնաւոր բան մը  
կ'ընեմ նշելու գարնան գա-  
լուստը: Կը գնեմ մրջիւնի թակարդ-  
ներ: Այդ փոքր յարձակողները շա-  
րունակաբար կը քայեն մեր խոհա-  
նոցին մէջ եւ կը փնտռեն գետին  
ինկած որեւէ փշրանք: Անոնք  
դժուարահաճ չեն: Գետնախնձորի  
կեղեւ մը, բրինձի հատիկ մը կամ  
պանիրի փշրանք մը, իրենց համար  
բաւարար կը նկատուի:

Թէեւ մրջիւնները կրնան նեղա-  
ցուցիչ նկատուիլ, սակայն Սողոմոն  
Թագաւոր գանոնք կը գովաբանէ  
իրենց յամառ աշխատանքին համար  
(Առակ. 6. 6-11): Ան կը մատնանչէ,  
թէ մրջիւնները ինքնավար են:

## Խաղաղութիւն Եւ Հաշտութիւն

Կարդա՛  
Մատթէոս 18. 21-35

Ուրեմն, պէտք չէ՞ր որ  
դուն ալ քու  
ծառայակիցիդ  
ողորմէիր, ինչպէս ես  
քեզի ողորմեցայ:  
—Մատթէոս 18. 33

ԱՍՏՈՒԱԾԱՆՈՒԵՂ ՄԷՉ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՉ

- Դ. Թագաւորաց 1-3
- Ղուկաս 24. 1-35

Քարին պատերազմին եւ անոր բոլոր երեւոյթներուն դէմ: Քանի մը տարիներ ետք, Աննա Ռիվըս Ճարվիս անունով կին մը սկսաւ Մայրերու Բարեկամութեան Օր շարժումը, փորձելով վերամիացնել ընտանիքներ եւ դրացիներ, որոնք բաժնուած էին իրարմէ պատերազմին պատճառով:

Քրիստոսի Աւետարանը մեզի կը բերէ խոստումը խաղաղութեան եւ Աստուծոյ եւ իրարու հետ Հաշտութեան: Երբ Պետրոս Հարցուց Յիսուսի, թէ քանի անգամներ պէտք էր ներել եղբօր մը՝ երբ մեղանչէր իր դէմ (Մատթ. 18. 21), Յիսուս զարմացուց իր ունկնդիրները ըսելով. — «Ոչ միայն եօթը անգամ պէտք է ներել, այլ եօթանասուն անգամ եօթը» (Կ. 22): Յետոյ Յիսուս պատմեց չմոռցուելիք պատմութիւն մը, ծառայի մը մասին, որ ներում ստացած էր եւ սակայն, ինքն ալ իր կարգին չէր ներած (Կ. 23-35):

Երբ Աստուած առանց պայմանի կը ներէ մեզի, Ան կ'ուզէ, որ մենք ալ ներենք մեր շուրջիներուն: Աստուծոյ սիրով եւ զօրութեամբ ներելը միշտ կարելի է:

---

Ներողամտութիւնը Քրիստոնէութիւնը  
գործնականի վերածել կը նշանակէ:

## Սորվիլ Վատահիլ

Կարդա՛  
Եսայի 66. 7-13

Տէրոջը վատահէ եւ  
բարիք ըրէ, որ երկրին  
մէջ բնակիս ու  
ճշմարտութեան մէջ  
արածիս:  
—Սաղմոս 37. 3

ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՆԵՐԸ ՄԷՎ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ

- Դ. Թագաւորաց 4-6
- Ղուկաս 24. 36-53

վրայ, առանց վախի, թէ անոնք կրնային վնասել ինձի: Թէեւ երբեմն ան կ'ուզէր, որ ուտէի կերակուր մը որ չէի սիրեր, բայց գիտէի, որ ան կը ստիպէր, որովհետեւ անոնք օգտակար էին ինձի համար: Ինչ որ ալ ըլլային պատճառները մօրս՝ այս ըրէ կամ այս մի ընէր ըսածներուն, ես վստահ գիտէի, թէ իմ լաւութեանս համար էին այդ բոլորը: Մօրս նպատակը զիս գուարճանքէ զրկել չէր երբեք, այլ ան կ'ուզէր, որ ես որեւէ ձեւով վնաս մը չկրեմ: Ան կ'ուզէր միշտ տէր ու պաշտպան կանգնել ինձի:

Աստուած ալ նոյն ձեւով կը յարաբերի մեզի հետ՝ ինքզինք մօր մը բաղդատելով. — «Ինչպէս մայր մը իր տղան կը հանգստացնէ, այնպէս ալ ես ձեզ պիտի հանգստացնեմ» (Եսայի 66. 13): Որպէս Աստուծոյ զաւակներ, ոչ մէկ պատճառ ունինք վախնալու, թէ ինչ կրնայ պատահիլ մեզի կամ ուրիշներուն: «Չարերուն համար մի՛... նախանձիր» (Սաղմ. 37. 1): Երբ կը վստահինք Աստուծոյ բարութեան, մենք սնած կ'ըլլանք իր հաւատարմութեամբ:

**Ե**րբ լուսանկարչական մեքենաս դրի մացառին վրայ՝ նկարելու մօտակայ բոյնին մէջի կարմրալանջի ձագերը, տեսայ որ անոնք իրենց բերանները բացած են առանց աչքերնին բանալու: Անոնք թուփի ճիւղերու շարժումէն իսկ գիտէին, որ մայր կարմրալանջն էր որ կու գար զիրենք կերակրելու:

Ահա այս է այն վստահութիւնը, որ սիրող մայրեր հետզհետէ կը փոխանցեն իրենց զաւակներուն: Նման մայր մը ունենալու օրհնութիւնները վայելելու բարեբախտութիւնը ունեցած եմ ես: Երբ փոքր էի, ախորժակով կ'ուտէի այն բոլոր ձաչերը, որ մայրս կը դնէր սեղանին

Աստուծոյ հոգածութիւնը կը շրջապատէ մեզ:

## Օգտակար Աէր

Կարդա՛  
Յովհ. 1. 9-14

Խօսքը մարմին եղաւ եւ  
մեր մէջ բնակեցաւ:  
—Յովհ. 1. 14

ԱՍՏՈՒԱԾԱՆՈՒԵՂ ՄԷՉ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՉ  
■ Դ. Թագաւորաց 7-9  
■ Յովհ. 1. 1-28

**Մ**օրս այս երկրային ճամբորդու-  
թեան աւարտին, ինք եւ Հայրս  
տակաւին շատ սիրով էին իրարու  
հետ, եւ միասնաբար կը բաժնեկցէին  
իրենց զօրաւոր Հաւատքը՝ Հաս-  
տատուած Քրիստոսի վրայ: Մայրս,  
մտային հիւանդութեան պատճառաւ,  
սկսաւ յիշողութիւնը կորսնցնել,  
չյիշելով նոյնիսկ իր ընտանիքի  
անդամները: Այդ բոլորէն ետք  
սակայն, երբ մայրս՝ Հոգածութեան  
Համար մասնաւոր Հաստատութեան  
մը մէջ դրուեցաւ, Հայրս ամէն օր  
կանոնաւոր կերպով կ'երթար զինք  
այցելելու եւ միշտ ալ կը փորձէր  
բարելաւել անոր անկարողի վիճակը:

Օրինակ, երբ մասնաւոր կերա-  
կուրներ ուտելու դժուարութիւն ունենար մայրս, Հայրս  
Համբերութեամբ զայն կը դնէր մօրս բերանը եւ երկար  
ատեն կը սպասէր, մինչեւ որ ան ծամելով կարենար կլլել  
զայն: Կերակուրէն ետք, Հայրս երկար ատեն կը նստէր  
մօրս քով, Հանդարտօրէն բռնած անոր ձեռքը: Երբ այցե-  
լութեան ժամանակը վերջ գտներ, Հայրս լայն ժպիտ մը  
դէմքին, կ'ըսէր.— «Շատ խաղաղ եւ ուրախ կը զգամ ինք-  
զինքս, երբ իր հետ ժամանակ անցընեմ»:

Թէեւ մեծապէս կ'ազդուէի Հօրս այդպէս ուրախութեամբ  
մօրս օգնելը տեսնելով, սակայն աւելի կ'ուրախանայի  
տեսնելով Աստուծոյ շնորհքին մէկ պատկերացումը: Յիսուս  
յօժարեցաւ խոնարհեցնել ինքզինք մեր տկարութեանց մէջ  
մեզի հետ Հաղորդակից ըլլալու: Յիսուսի մարդեղութեան  
ակնարկելով Առաքեալը կ'ըսէ.— «Խօսքը մարմին եղաւ  
եւ մեր մէջ բնակեցաւ» (Յովհ. 1. 14): Մեր մարդկային սահ-  
մանափակումները նկատի ունենալով, Ան անհամար կարեկ-  
ցական գործեր ըրաւ, բարելաւելու մեր տկարութիւնները:

Օրհնութեան միջոց մը ըլլալու համար, թոյլ տուր  
որ Քրիստոսի սէրը հոսի բու մէջէն:

**Կ**րնա՞ս ինձի ըսել, թէ ուր կրնամ  
գտնել լոյսի լամբերը»:

«Վստահաբար: Եկուր հետս որ  
ցոյց տամ անոնց տեղը»:

Շատ մը վաճառատուներու մէջ  
գործաւորներուն պատուէր տրուած  
է, որ յաճախորդները առաջնորդեն  
այնտեղ՝ ուր կը գտնուի իրենց  
փնտռած ապրանքը, քան թէ բա-  
ւարարուին բեռանացի բացատրու-  
թիւն տալով՝ ուղղութիւնը ցոյց  
տալու: Քաղաքավարութեան այս  
պարզ ժեստը՝ քալել յաճախորդին  
հետ, անոր փնտռած տեղը գտնելու  
համար, կ'օգնէ մեզի, հասկնալու,  
թէ ինչպէ՞ս պէտք է առաջնորդել  
ուրիշները Քրիստոսի:

Եկէ՛ք Եւ Տեսէք

Կարդա՛  
Յովհ. 1. 35-46

Եկէ՛ք եւ տեսէք:  
-Յովհ. 1. 39

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՆԵՐ ԼԵՂ  
ՏԱՐՈՒՆ ԼԵՂ  
■ Դ. Թագաւորաց 10-12  
■ Յովհ. 1. 29-51

Յովհաննէս Առաքեալ, իր Աւետարանին առաջին գլխուն  
մէջ այս խօսքը երկու անգամներ կը կրկնէ.- «Եկէ՛ք եւ  
տեսէք»: Երբ Յովհաննէս Մկրտիչի երկու հետաքրքրի  
աշակերտները Յիսուսի քով գալով հարցուցին անոր, թէ  
ո՞ւր էր իր օթեւանը, Յիսուս ըսաւ.- «Եկէ՛ք եւ տեսէք»  
(Հ. 39): Ամբողջ օրը Յիսուսի հետ անցընելէ ետք Փիլիպպոս  
ըսաւ Նաթանայէլի, թէ ինք Մեսիան գտած էր: Երբ Նաթա-  
նայէլ հաւատալ չուզեց, Փիլիպպոս ըսաւ.- «Եկո՛ւր եւ  
տես» (Հ. 46):

Յիսուսի մասին վկայելը առաջին քայլը կը նկատուի  
մեր շուրջը գտնուողները Յիսուսի առաջնորդելու: Հարցը  
հոն չաւարտիր: Պէտք է քալել կողք կողքի մարդոց հետ,  
որոնք օգնութեան կը կարօտին: Մեր հետաքրքրութիւնը՝  
որ անոնք հոգեւորապէս աճին ու զարգանան, մեր  
աղօթքները եւ մեր անոնց մօտ ըլլալը, լուութեամբ պիտի  
ըսեն.- «Եկէ՛ք ու տեսէք: Թոյլ տուէք որ միասին քալենք,  
եւ ես ձեզ Յիսուսի տանիմ»:

Ազնուութիւնն ու կարեկցութիւնը շատ աւելի մարդիկ  
առաջնորդած են Քրիստոսի քան Աւետարանչական կոչեր:

### Կասկածից Բարիքները

Կարդա՛  
Ա. Կորնթացիս 13

(Սէրը) Ամէն բանի կը  
հանդուրժէ, ամէն բանի  
կը հաւատայ, ամէն  
բանի կը յուսայ, ամէն  
բանի կը տոկայ:  
—Ա. Կորնթ. 13. 7

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՄԷՎ  
ՏԱՐՈՒՆ, ՄԷՋ  
■ Դ. Թագաւորաց 13-14  
■ Յովհ. 2

այս օրինական եւ բժշկական ասացուածքը գործածել նաեւ մեր յարաբերութիւններու ընթացքին: Ատկէ աւելի լաւ, կրնանք սորվիլ Աստուածաշունչէն, կասկածին բարիքները ուրիշներուն փոխանցելով: Ա. Կորնթ. 13. 7 Համարը կ'ըսէ, թէ սէրը «Ամէն բանի կը հանդուրժէ, ամէն բանի կը հաւատայ, ամէն բանի կը յուսայ, ամէն բանի կը տոկայ»: Աստուածաբան մը մեկնաբաներով «Ամէն բանի կը հաւատայ» խօսքը կ'ըսէ.— «Մարդոց մէջ լաւը տեսնել... չի նշանակեր, որ սէրը դիւրախաբ է, այլ ըսել կ'ուզէ, թէ սէրը չի մտածեր աւելի գէշը պատահելուն (ինչպէս աշխարհիկ մտածողութիւնը): Ան հաւատքով ճամբայ կ'ելլէ: Սէրը չի խաբուիր... Սակայն ան միշտ կասկածի մէջ բարիք մը կը տեսնէ»:

Երբ ուրիշներուն մասին ժխտական բան մը լսենք, կամ կասկածինք մարդոց գործելու շարժառիթին վրայ, պահ մը կենանք, դատելէ առաջ անոնց մտադրութիւնները՝ լաւ կամ գէշ: Մեր կասկածին մէջ բարիք մը տեսնենք:

Սէրը կասկածից մէջ կ'ուզէ բարիք մը տեսնել:

**Բ** բժիշկ Թովմաս Իման, 1860-ին, իր պաշտօնակից բժիշկներուն կը յանձնարարէ, որ չդեղագրեն իրենց հիւանդներուն դեղ մը, որուն օգտակար ըլլալուն շատ վստահ չեն: Անոնք պէտք էր տային իրենց հիւանդներուն «մեր կասկածներուն բարիքները»: Այս խօսքը, միեւնոյն ատեն օրինական իմաստ ունի, որ կը նշանակէ, եթէ դատական կազմը կ'ունենայ զիրար հակասող վկայութիւններ եւ կասկած կ'արթնցնէ դատական կազմի անդամներուն քով, նման պարագայի տակ «ոչ յանցաւոր» վճիռը կ'արձակուի:

Թերեւս, որպէս հաւատացեալներ, կրնանք ասկէ բան մը սորվիլ եւ այս օրինական եւ բժշկական ասացուածքը գործածել նաեւ մեր յարաբերութիւններու ընթացքին: Ատկէ աւելի լաւ, կրնանք սորվիլ Աստուածաշունչէն, կասկածին բարիքները ուրիշներուն փոխանցելով: Ա. Կորնթ. 13. 7 Համարը կ'ըսէ, թէ սէրը «Ամէն բանի կը հանդուրժէ, ամէն բանի կը հաւատայ, ամէն բանի կը յուսայ, ամէն բանի կը տոկայ»: Աստուածաբան մը մեկնաբաներով «Ամէն բանի կը հաւատայ» խօսքը կ'ըսէ.— «Մարդոց մէջ լաւը տեսնել... չի նշանակեր, որ սէրը դիւրախաբ է, այլ ըսել կ'ուզէ, թէ սէրը չի մտածեր աւելի գէշը պատահելուն (ինչպէս աշխարհիկ մտածողութիւնը): Ան հաւատքով ճամբայ կ'ելլէ: Սէրը չի խաբուիր... Սակայն ան միշտ կասկածի մէջ բարիք մը կը տեսնէ»:

Երբ ուրիշներուն մասին ժխտական բան մը լսենք, կամ կասկածինք մարդոց գործելու շարժառիթին վրայ, պահ մը կենանք, դատելէ առաջ անոնց մտադրութիւնները՝ լաւ կամ գէշ: Մեր կասկածին մէջ բարիք մը տեսնենք:

## Տուն Ե՛կ

Կարդա՛  
Սաղմոս 51. 1-13

Քու փրկութեանդ  
ցնծութիւնը ինձի  
վերադարձուր, եւ ազնիւ  
նոգի մը թող հաստատէ  
զիս:  
—Սաղմոս 51. 12

ԱՍՏՈՒԱԾԱԵՆՈՒԵՂ ՄԷԿ  
ՏՈՒՆԸ ՄԷՋ  
■ Դ. Թագաւորաց 15-16  
■ Յովհ. 3. 1-18

19 տարեկան էմիլիան, երբ բժիշկին գրասենեակը նստած կը սպասէր, լսեց իրեն ծանօթ «Մեղմ, քաղցր ձայնով Յիսուս կը կանչէ» երգը որ կը նուազուէր բարձրախօսէն: Ան ուրախ զգաց յիշելով երգին բառերը: Թերեւս «Շուքերը կը հաւաքուին, մահուան անկողինները կուգան» բառերով երգ մը յարմար չէ բժիշկի մը գրասենեակին մէջ նուազուելու:

Ոմանք այս հին երգը շատ զգացական կը գտնեն իրենց ճաշակին համար: Սակայն, կրկներգին պատգամը կրնայ քաջալերական ըլլալ ծանր մեղաւորի մը համար.—

Տուն ե՛կ, տուն ե՛կ,

Ո՛վ յոգնած հոգի տուն ե՛կ,

Քաղցրութեամբ եւ սիրով Տէրն քեզ կը կանչէ,

Ով դուն մեղաւոր, տուն ե՛կ:

Երբ հաւատացեալ մը Աստուծոյ կամքը կը փոխարինէ իր կամքով, ան ինքզինք պիտի գտնէ իր հաւատքը կորսնցուցած վիճակի մը մէջ՝ խղուած Աստուծոյ եւ ոչ նախանձելի կացութեան մը մէջ: Թէեւ յաճախ տեղի կու տանք եւ կ'ապրինք շատ անձնակեղրոն կեանք մը, սակայն, Աստուած միշտ պատրաստ է մեզի ընդունելու, երբ դառնանք իրեն: Աստուծոյ գուրգուրանքն ու գթութիւնը, իրեն ուրախութիւն կու տան, երբ մենք, որպէս մեղաւորներ, կը ձգենք ըմբոստութիւնը եւ կը դառնանք իրեն եւ իր ներողամտութիւնը կը խնդրենք (Սաղմ. 51. 1-2, Ղուկ. 15):

Սիրելի ընթերցող բարեկամ, արդեօք քու ալ սիրտդ եւ միտքդ հեռացա՞ծ են քու Փրկիչէդ: Յիսուս քեզի ալ կը սպասէ եւ կը կանչէ, որ դուն ալ տուն վերադառնաս:

---

Աստուծոյ զաւակ մը միշտ սիրով կ'ընդունուի  
երբ տուն գայ:

## Զօրաւոր Ունամատը

Կարդա՛  
Ա. Կորնթ. 12.14-26

Եթէ ոտքդ ըսէ՝ «Որով-  
հետեւ ես ձեռք չեմ՝  
մարմինէն չեմ», ատիկա  
պատճառ մը չէ որ ալ  
մարմին չըլլայ:  
—Ա. Կորնթ. 12. 15

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՆԵՐ ՄԷ՛Կ  
ՏԱՐՈՒՆ ՄԷ՛Ջ  
■ Գ. Թագաւորաց 17-18  
■ Յովհ. 3. 19-36

մարմինն այն մասը, որ ընդհանրապէս կ'անտեսուի: Մեր ոտքերը եւ բթամատերը կարեւոր մէկ մասը կը կազմեն մեր մարմինի անդամներուն, եւ սակայն, մենք շատ քիչ հոգատարութիւն ցոյց կու տանք անոնց, մինչեւ անոնց պատահական վիրաւորուիլը:

Ասոր համար է թերեւս, Առաքեալը կը գործածէ ոտքը, յիշեցնելու մեզի անկարեւոր մասերը Յիսուսի մարմինին: Ան կ'ըսէ. — «Եթէ ոտքը ըսէ՝ "որովհետեւ ես ձեռք չեմ՝ մարմինէն չեմ", ատիկա պատճառ մը չէ, որ ալ մարմինէն չըլլայ»: Անշուշտ ան մարմինին մաս կը կազմէ» (Ա. Կորնթ. 12. 15): Առաքեալը կ'ոգէ որ անդրադառնանք այն իրողութեան, թէ իւրաքանչիւր անձ Յիսուսի մարմինին մէջ կարեւոր տեղ ունի, նոյնիսկ եթէ մենք մեզ անկարեւոր եւ անտեսուած անդամ մը նկատենք Յիսուսի մարմինին: Եւ մենք պատուած կ'ըլլանք զԱստուած ճշմարիտ ախոյեանի մը պէս, երբ մեր տաղանդը կը գործածենք իր փառքին համար:

---

Աստուած փոքր գործիքներ կը գործածէ մեծ գործեր կատարելու համար:

**Վ**երջերս լսեցի մարզական խաղի մը մասին, որ երեւակայութիւնն աշխատցուց: Զկրցայ հասկնալ, թէ ինչպէս կրնայ մէկը խաղալ այդ խաղը: Խաղը կը կոչուի «Ռտնամատի Գօտեմարտ»: Ամէն տարի, աշխարհի ամէն կողմերէն մարզիկ Անգլիա կը հաւաքուին ախոյեանական խաղերու համար: Մրցողներ դէմ դիմաց գետին կը նստին, մերկ ոտքերով, եւ կը փորձեն մէկը միւսին ոտքին փթամատին վրայ ճնշելով զայն գետին գամել, նման ձեռքի այն մրցումին, երբ խաղցողներ կը փորձեն հակառակորդին դաստակը գետին կպցնել: Այս մրցումը ձեւով մը նկատի կ'առնէ

Համբերութիւն՝  
Համբերելու Համար

Կարդա՛  
Սաղմոս 130. 1-8

Ես Տէրոջը կը սպասեմ,  
իմ անձս կը սպասէ, ու  
Անոր Խօսքիմ կը  
յուսամ:  
—Սաղմոս 130. 5

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՆԵՐԸ ՄԷՉ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՉ  
■ Դ. Թագաւորաց 19-21  
■ Յովհ. 4. 1-30

Թեանց պէս կու գան երբեմն: Համբերութիւնը հաւատքի հասունութեան նշաններէն մէկն է: Յատկանիշ մը, որ կը զարգանայ ժամանակի ընթացքին:

Շատ մը աղօթքներ Աստուածաշունչին մէջ, Համբերութեան արդիւնք են: Յակոբ սպասեց եօթը տարի կնոջ մը համար, եւ ետքը, խաբուելէ ետք այդ կնոջ հօրմէ, եօթը տարի եւս աշխատեցաւ (Ծննդ. 29. 15-20): Իսրայէլացիներ սպասեցին չորս դարեր փրկութեան համար: Մովսէս սպասեց չորս տասնամեակներ, առաջնորդելու համար իր ժողովուրդը, եւ ապա ուրիշ չորս տասնամեակներ խոստացուած երկիրը հասնելու, ուր ինք պիտի չկարենար մտնել:

«Աստուան սպասողներէն աւելի, իմ անձս Տէրոջ կը սպասէ» կ'ըսէ Սաղմոսերգուն (130. 6), ինչպէս պահակ մը վայրկեանները կը համրէ, թէ երբ իր կարգը պիտի աւարտի:

Ես կ'աղօթեմ համբերութեան համար, որպէսզի տոկանք փորձութեան, շարունակեանք յուսալ եւ հաւատալ: Կ'աղօթեմ համբերութեան համար՝ որպէսզի ըլլանք համբերատար:

Աստուած հազուագիտօրէն մեծ գործեր կ'ընէ  
անապարան քով:

**Մ**անուկներ յաճախ կը պնդեն իրենց ուզածը ունենալ՝ հիմա: «Բայց ես հիմա՝ անուշեղէն կ'ուզեմ»: «Հիմա՝ կրնա՞նք բանալ նուէրները»: Ասոր հակառակը, որքան ծերանանք, այնքան աւելի կը վարժուինք սպասելու: Բժշկական ուսանողներ կը սպասեն մարզուելու ընթացքին: Ծնողներ յոյսով կը սպասեն իրենց անառակ որդիին տուն վերադարձին: Մենք կը սպասենք այն բաներուն, որոնք արժանի են սպասումի, եւ այդ ընթացքին, կը սորվինք համբերել:

Աստուած, որ անժամանակ է, կ'ակնկալէ մեզմէ, որ ունենանք հասուն հաւատք, որ կրնայ դիմադրուել ուշացումներ, որոնք փորձու-

## Զօրաւոր Բառեր

Կարդա՛  
Ա. Յովհ. 3. 10-18

Ամէն ով որ արդարու-  
թիւն չի գործեր, անկա  
Աստուծմէ չէ:  
—Ա. Յովհաննոս 3. 10

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՆԵՐԸ ՄԷՎ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ  
■ Դ. Թագաւորաց 22-23  
■ Յովհ. 4. 31-54

դէպ անոնց ունեցած տեսակէտը: Երբեմն ճշմարտութիւն կրնայ ըլլալ անոնց ըսածներուն մէջ: Ա. Յովհ. 3-րդ գլուխը կը սկսի սա բառերով.— «Տեսէ՛ք, Հայրը ինչպիսի սէր շնորհեց մեզի, որպէսզի մենք Աստուծոյ որդիները կոչուինք» (Գ. 1): Առաքեալը յատակ կերպով կը ներկայացնէ Հակադրութիւնը Հաւատացեալներու, որոնք կը սիրեն արդարութիւնը, իրենք զիրենք հեռու կը պահեն մեղքէն եւ կը սիրեն զիրար: Իսկ ոչ Հաւատացեալներ, կը մեղանչեն, կ'ատեն ուրիշները եւ կը կենան մահուան մէջ:

Ասոնք զօրաւոր բառեր են: Մենք կամ Քրիստոսի հետեւողներ ենք կամ ալ Սատանային: Մենք կայէնի կամ Աբէլի պէս ենք (Գ. 12, Ծննդ. 4. 8-15): Յովհաննէս Առաքեալ կ'ըսէ, թէ ուրիշները սիրելը կը փաստէ, որ մենք Աստուծոյ Հարազատ զաւակներն ենք (3. 10, 18-19, 4. 7-8): Չենք կրնար չարուճակել մեղք գործել եւ միեւնոյն ատեն մենք մեզ Քրիստոսի հետեւողներ կոչել: Միշտ վստահ ըլլանք, թէ մեր խօսքերն ու գործերը նեցուկ կը կանգնին մեր Հաւատքին:

Քրիստոսի հետեւիլը երկու պահանջներ ունի - հաւատալ Իրեն եւ գործել այդ հաւատքին համաձայն:

**Ո**չ Հաւատացեալ խորագրով գիրքը պատճառներ կը ներկայացնէ, թէ ինչո՞ւ կարգ մը ոչ Հաւատացեալներ չեն սիրեր այն մարդիկը, որոնք կը դաւանին իրենց Հաւատքը Յիսուս Քրիստոսի վրայ: Անոնց գլխաւոր գանգատներէն մէկը կարգ մը Հաւատացեալներու վարուելակերպն է ոչ Հաւատացեալներու Հանդէպ: Ոչ Հաւատացեալներ յաճախ կը տեսնեն Հաւատացեալները որպէս կեղծաւորներ, միշտ քննադատող, կոշտ եւ ոչ սիրալիւր վերաբերմունք ցոյց տուող՝ բոլոր անոնց Հանդէպ, որոնք իրենց պէս չեն:

Թերեւս դուն ալ ինծի պէս չես սիրեր լսել Հաւատացեալներու Հանդէպ անոնց ունեցած տեսակէտը: Երբեմն ճշմարտութիւն կրնայ ըլլալ անոնց ըսածներուն մէջ: Ա. Յովհ. 3-րդ գլուխը կը սկսի սա բառերով.— «Տեսէ՛ք, Հայրը ինչպիսի սէր շնորհեց մեզի, որպէսզի մենք Աստուծոյ որդիները կոչուինք» (Գ. 1): Առաքեալը յատակ կերպով կը ներկայացնէ Հակադրութիւնը Հաւատացեալներու, որոնք կը սիրեն արդարութիւնը, իրենք զիրենք հեռու կը պահեն մեղքէն եւ կը սիրեն զիրար: Իսկ ոչ Հաւատացեալներ, կը մեղանչեն, կ'ատեն ուրիշները եւ կը կենան մահուան մէջ:

Երբ Կեանքը  
Անարդար Կը Թուի

Կարդա՛  
Սաղմոս 73

Վասնզի նախանձեցայ  
նպարտներուն, երբ  
ամբարիշտներուն  
յաջողութիւնը տեսայ:  
—Սաղմոս 73. 3

ԱՍՏՈՒԱԾԱԵՆՈՒՆԸ ՄԷ՛Վ  
ՏԱՐՈՒՆ ՄԷ՛Ջ

■ Դ. Թագաւորաց 24-25  
■ Յովհ. 5. 1-24

**Ա**րդեօք երբեք զգացա՞ծ ես, թէ կեանքը անարդար է: Անոնք որոնք ուխտած են հետեւիլ Քրիստոսի եւ Անոր կամքին համեմատ կեանք մը ապրիլ, շատ դիւրին է յուսախաբուիլ, երբ մարդիկ, որոնք երբեք կարեւորութիւնն չեն տար Քրիստոսի, այսուհանդերձ յաջող կեանք մը ունին: Առեւտրական մարդ մը, որ միշտ խարդախութիւններ կը կատարէ, տակաւին կը շարունակէ մեծ գումարներով դրամ շահիլ: Ուրիշ երիտասարդ մը, որ յաճախ գիշերները մինչեւ ուշ կերուխոսմով կ'անցընէ, տակաւին առողջ եւ կայտառ է: Մինչդեռ դուն, կամ քեզի սիրելի եղող մէկը, կը մաքաւի նիւթական եւ առողջական հարցերու դէմ: Նման պարագաներուն, պահ մը կը զգանք, թէ խաբուած ենք եւ մեր բարութիւնը ոչ մէկ բանի ծառայած է:

Եթէ երբեք պատահած է, որ այդպէս զգաս, մի՛ յուսահատիր: 73-րդ Սաղմոսին հեղինակը ցանկ մը կը ներկայացնէ, թէ ինչպէս չարը կը յառաջդիմէ, եւ ապա կ'ըսէ.— «Յիրաւի գուր տեղը... իմ սիրտս մաքրեցի» (Կ. 13): Սակայն իր մտածումները կը փոխուին երբ ան կը յիշէ իր Աստուծոյ ներկայութեան մէջ գտնուիլը.— «Անոնց վախճանը իմացայ» (Կ. 17):

Երբ Աստուծոյ հետ ժամանակ կ'անցընենք եւ հարցերը իր տեսանկիւնէն կը դիտենք, մեր հեռանկարը ամբողջութեամբ կը փոխուի: Թերեւս ոչ հաւատացեալներուն կը նախանձինք հիմա, սակայն այդպէս պիտի չըլլայ Դատաստանի օրը: Փառաբանենք Աստուծոյ այս կեանքին մէջ իր ներկայութեան համար եւ գալիք կեանքի իր խոստումին համար:

Աստուծոյ հետ ժամանակ անցընելը մնացած ամէն բաները շիտակ ընթացքի մէջ կը դնէ:

Փոխընտրութիւններ  
Վրէժխնդրութեան

Կարդա՛  
Մատթէոս 5. 38-45

Վրէժ մի՛ առներ...  
Հապա քու ընկերդ քու  
անձիդ պէս սիրէ:  
—Ղեւտացոց 19. 18

ԱՍՏՈՒԱԾԱԸՆՈՒՆԵՐ ՄԷ՛Կ  
ՏԱՐՈՒՆ ՄԷ՛Ջ

- Ա. Մնացորդաց 1-3
- Յովհ. 5. 25-47

(Ղեւտ. 19, 18, տես նաեւ Բ. Օր. 32. 35): Յիսուս եւ իր աշակերտներն ալ վրէժխնդրութիւնը արգելուած արարք նկատեցին (Մատթ. 5. 38-45, Հռովմ. 12. 17, Ա. Պետ. 3. 9):

Ըստ Հին Կտակարանի «Աչքի տեղ աչք» օրէնքին (Ելից 21. 33-35, Բ. Օր. 19. 21), դատական պատժամիջոցները երբեք անարդար կամ չարակամ չէին նկատուէր: Սակայն աւելի մեծ սկզբունք մը կար, որ սպառնալիք կը նկատուէր երբ հարցը անձնական վրէժխնդրութիւն ըլլար: Պէտք էր արդարութիւն ըլլար, եւ սակայն անիկա պէտք էր դրուէր Աստուծոյ ձեռքերուն մէջ կամ այն հեղինակութեանց, որոնք նշանակուած էին Աստուծոյ կողմէ:

Փոխանակ անարգանքն ու վիրաւորանքը փոխադարձելու, պէտք է Քրիստոսի պատիւ բերող ներողամտութեան փոխընտրութիւններ կատարել: Ապրիլ խաղաղութեամբ բոլորին հետ (Հռ. 12. 18), ենթարկուիլ հոգեւոր միջնորդութեան (Ա. Կոր. 6. 1-6) եւ հարցը ձգել հեղինակութեանց դատողութեան եւ ամէնէն աւելի վատահիլ Աստուծոյ:

Վերջնական արդարութիւնը արդար Աստուծոյ  
ձեռքերուն մէջ ձգէ՛:

**Կ**իրակի մը երբ հովիւ մը կը քարոզէր, մէկը կը մօտենայ եւ կը սկսի հարուածել անոր: Հովիւը կը շարունակէ քարոզը եւ մարդը կը ձեռքակալուի: Հովիւը կ'աղօթէ մարդուն համար եւ քանի մը օր ետք կ'այցելէ զայն բանտին մէջ: Ի՛նչ սքանչելի եւ օրինակելի վերաբերմունք մէկու մը հանդէպ, որ մեզ կ'անարգէ եւ կը վիրաւորէ:

Թէեւ ինքնապաշտպանութիւնը տեղ ունի Հին Կտակարանին մէջ, սակայն անձնական վրէժխնդրութիւնը արգելուած է.— «Վրէժ մի՛ առներ եւ քու ժողովուրդիդ որդիներուն դէմ ռի մի՛ պահեր, հապա քու ընկերդ քու անձիդ պէս սիրէ»

# Մենք Պիտի Փոխուիմք

Կարդա՛

Բ. Կորնթ. 4. 16 - 5. 8

Անոր պէս պիտի ըլլանք,  
քանի որ Զանգիկա պիտի  
տեսնենք՝ ինչպէս որ է:  
—Ա. Յովհաննու 3. 2

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՎ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ

■ Ա. Մնացորդաց 4-6

■ Յովհ. 6. 1-21

կոկիկ եւ լաւ կազմակերպուած մտքով արթուն մարդ մը, հետզհետէ կը մոռնայ ինչպէս հազնիլ իր հազուատները: Զի կրնար ճանչնալ իր անմիջական ընտանեկան պարագաները եւ սիրելիները: Այդ վիճակը կարելի է նկատել՝ կորսնցնել մէկը մեռնելէ առաջ:

Յիշողութեան կորուստը կրնայ պատահիլ ուրիշ պատճառներով ալ, ինչպէս արկածի մը կամ ծանր վէրքի մը, կամ վախի ցնցումի մը որպէս հետեւեանք: Բոլոր անոնք, որոնք խոր ծերութեան կը հասնին, մարմինին տեղի տալը անխուսափելի երեւոյթ է: Սակայն հաւատացեալին համար յոյսը կայ: Երբ հաւատացեալներ, յարութեան փորձառութեամբ կը ստանան իրենց փառաւորեալ մարմինը, անոնք կատարեալ պիտի ըլլան (Բ. Կորնթ. 5. 1-5): Աւելի կարեւորը, երկինքի մէջ պիտի ճանչնանք Անոր, որ մեռաւ մեզ փրկելու համար: Մենք պիտի յիշենք Անոր մեզի համար ըրածը եւ պիտի ճանչնանք Զայն իր ձեռքերուն գամերուն սպիներէն (Յովհ. 20. 25, Ա. Կոր. 13. 12):

Աչքի թարթումի մը մէջ... մենք ալ պիտի  
փոխուիմք:

**Թ** ումաս Տըպակիօ զգալով, որ Ալգայմըը Հիւանդութիւնը (Յիշողութիւնը կորսնել) մտալուտ էր, սկսաւ ժամանակագրել իր զգացումները, Կորսնցնելով Յիշողութիւնս խորագրով գիրքին մէջ: Գիրքին մէջ արձանագրած է այն մտային ընթացքը, որ քիչ առ քիչ, գործեր, վայրեր եւ մարդիկ մոռացութեան կ'ենթարկուին:

Ալգայմըը Հիւանդութիւնը հետեւեանքն է ուղեղին մէջ եղող ջղային բջիջներուն տկարանալուն, որ հետզհետէ կը տանի յիշողութեան կորուստի, շփոթութեան եւ վարժութիւններու մոռացումին: Շատ ցաւալի կ'ըլլայ տեսնել այնքան

ԽՅՈՒԱԾ  
Յարաբերութիւններ

Կարդա՛  
Փիլիպպեցիս 4. 2-7

Բան մը գրգռութիւնով  
կամ սնապարծութեամբ  
մի՛ ընէք:  
—Փիլիպպեցիս 2. 3

ԱՍՏՈՒԱԾԱԵՆՈՒՆԵՐ ՄԷ՛Յ  
ՏԱՐՈՒՆ ՄԷ՛Ջ  
■ Ա. Մնացորդաց 7-9  
■ Յովհ. 6. 22-44

2 Համարով Առաքեալը կ'ըսէ եկեղեցւոյ մէջ եղող երկու կիներու.— «Եւոզիային կ'աղաչեմ ու Սիւնտիքին կ'աղաչեմ, որ միեւնոյն խորհուրդը ունենան Տէրոջմով»: Այս երկու կիներուն վէճերը վտանգ մը դարձած էր Փիլիպպեցիներու եկեղեցիի քանդուելուն, եթէ վէճին լուծում մը չտրուէր: Ասոր համար Առաքեալը կը խնդրէ իր «հարազատ լծակիցէն» (4. 3), որ օգնէ վերակառուցանելու այդ յարաբերութիւնը:

Դժբախտաբար հաւատացեալներ ալ երբեմն վէճեր եւ կռիւներ կը ստեղծեն, երբ կանչուած են խաղաղութիւն ընելու եւ խաղաղութեամբ իրարու հետ ապրելու (Հռովմ. 12. 18): Այնքան ատեն, որ մեր վէճերը լուծում մը չեն, Քրիստոնէական վկայութիւնը, որ այնքան ժրջանութեամբ կառուցուած է, կրնայ յանկարծ քանդուելիլ: Նոր շէնք մը կառուցանելու նման, շատ ճիգ եւ ժամանակ պէտք է յաճախ քանդուած յարաբերութիւն մը վերակառուցանելու: Լաւ է, որ միշտ Տէրոջմով հաշտութիւն փնտռենք:

Երկու հաւատացեալներ աւելի լաւ են քան մէկը,  
երբ անոնք մէկ են Քրիստոսով:

**Մ**եր տան պատշգամէն դիտեցի,  
դիմացի 20 յարկանի շէնքին  
քանդումը: Այդ շէնքին քանդումը  
հազիւ մէկ շաբաթ տեւեց: Անոր  
տեղ հիմա նոր շէնք մը կը բարձ-  
րանայ: Ամիսներէ ի վեր անդադար  
աշխատանք կը տարուի, շաբաթա-  
վերջերն ու երբեմն գիշերներն ալ  
կ'աշխատին, եւ տակաւին նոր կա-  
ռուցանուող շէնքը անկատար է: Կը  
մտածեմ, թէ որքա՛ն դիւրին է  
քանդելը քան կառուցանելը:

Այն՝ ինչ որ ճշմարտութիւն է  
շէնք մը քանդելու եւ կառուցանե-  
լու պարագային, ճշմարտութիւն է  
նաեւ մեր մարդկային փոխ յարաբե-  
րութեանց պարագային: Փիլիպ. 4.

## Խոնարհութեամբ Ստանալ

Կարդա՛  
Յակոբ 1. 13-22

Ուստի, ամէն աղտեղութիւն ու չարութիւն մէկդի ձգելով, հեզութեամբ ընդունեցէ՛ք ձեր մէջ սերմանուած խօսքը, որ կրնայ ձեր հոգիները փրկել: —Յակոբ 1. 21

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՆԵՐ ՄԷՉ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՉ

■ Ա. Մնացորդաց 10-12  
■ Յովհ. 6. 45-71

ներուն, քան ընդունելու գանոնք:

Յակոբոս Առաքեալ կը գրէ ըսելով.— «Ուստի ամէն աղտեղութիւն ու չարութիւն մէկդի ձգելով, հեզութեամբ ընդունեցէ՛ք ձեր մէջ սերմանուած խօսքը, որ կրնայ ձեր հոգիները փրկել: Խօսքը կատարեցէ՛ք, միայն մի՛ լսէք՝ ինքզինքնիդ խաբելով» (Յակ. 1. 21-22): Այստեղ գործածուած Յունարէն բառը՝ ընդունեցէ՛ք կը նշանակէ, «քննելէ ետք ընդունիլ այն, ինչ որ կը տրուի»: Հեզութիւնը վերաբերմունք մըն է Աստուծոյ հանդէպ «որուն միջոցաւ մենք կ'ընդունինք Անոր վերաբերմունքը մեզի հետ որպէս բարութիւն, ուրեմն առանց ոչ մէկ առարկութեան կ'ընդունինք Իր պատուէրները»: Հեզ հոգի մը չի մարտնչիր Աստուծոյ դէմ կամ վիճիլ Անոր հետ: Աստուծոյ զօրաւոր Խօսքը սերմանուած մեր սիրտերուն մէջ վստահելի աղբիւր մըն է հոգեւոր իմաստութեան եւ զօրութեան: Եւ այդ Խօսքը մատչելի է բոլոր անոնց, որոնք հեզութեամբ իրենց սիրտերը կը բանան եւ կ'ընդունին Չայն:

Աղօթքի ոգիով րա՛ց Աստուածաշունչդ, կարդա՛ գայն ուշադրութեամբ, եւ հնազանդե՛ Անոր ուրախութեամբ:

Թարմ Պտուղ

Կարդա՛  
Սաղմոս 92

Արդարը... ծերութեան  
ատենն ալ պտուղ պիտի  
տայ:  
—Սաղմոս 92. 12, 14

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՆԵՐԸ ՄԷ՛Ց  
ՏԱՐՈՒՆ, ՄԷ՛Ց  
■ Ա. Մնացորդաց 13-15  
■ Յովհ. 7. 1-27

92-րդ Սաղմոսը, ամէն պարագայի մեզի կը յիշեցնէ, թէ հարց չէ ինչ տարիքի մէջ կը գտնուինք, կրնանք թարմ եւ բարեբեր կեանք մը ունենալ: Մարդիկ եւ կիներ, որոնք «տնկուած» են Աստուծոյ այգիին հարուստ հողին վրայ, պիտի շարունակեն «պտուղ տալ», «պարարտ ու կանաչ» մնալ (Հ. 14): Յիսուս խոստացաւ.— «Ան որ իմ վրաս հաստատուած է՝ եւ ես անոր վրայ» անիկա պիտի շարունակէ «չատ պտուղ» բերել (Յովհ. 15. 5):

Այո՛, մկաններ կրնան սկսիլ ցաւելու, յօդեր տկարանալու եւ կեանքը հետզհետէ դանդաղելու: Սակայն, ներքնապէս, մենք կրնանք «օրէ օր նորոգուիլ» (Բ. Կորնթ. 4. 16):

Վերջերս հանդիպեցայ ճերմակ մազերով գեղեցիկ կնոջ մը, որուն հազած շապիկին վրայ գրուած էր.— «Ես 80 տարեկամ չեմ, այլ 18՝ 62 տարիներու փորձառութեամբ»: Հարց չէ թէ որքան մեր տարիքը յառաջացած է, մենք տակաւին կրնանք սրտով երիտասարդ ըլլալ երբ կ'ապրինք հաւատքի, յոյսի եւ Աստուծոյ սիրով լեցուած կեանք մը:

**Կ**ը սիրեմ՝ մահազդներու էջի վրայի նկարները դիտել մեր տեղական օրաթերթին մէջ: Ժպտերես երիտասարդ մը, գինուորական համագգեստով, որուն տակ արձանագրուած է.— 92 տարեկան, իր երկրին համար կռուած Բ. Համաշխարհային Պատերազմին, կամ կնոջ մը նկարը փայլփլող աչքերով.— 89 տարեկան երիտասարդուհի, ծնած եւ մեծցած Քանասա՝ ազարակի մը մէջ, տազնապի տարիներուն: Նկարին անխօս պատգամը.— Ես միշտ ծեր չեմ եղած:

Յաճախ, բոլոր անոնք, որոնք երկար կեանք կ'ունենան, մէկդի դրուած կը զգան իրենք գիրենք, իրենց կեանքի վերջին տարիներուն:

## Ցուցատախտակին Լեզուն

Կարդա՛  
Յովհաննու 1. 14-18

Տէրը անեցնէ ու  
անեցնէ ձեր սէրը  
իրարու հանդէպ եւ  
ամէնուհ հանդէպ:  
—Ա. Թեսաղ. 3. 12

ԱՍՏՈՒԱԾԱԵՆՈՒՆԵՐ ԱՒԿ  
ՏԱՐՈՒՆ, ՄԷՋ  
■ Ա. Մնացորդաց 16-18  
■ Յովհ. 7. 28-53

Թեան մասին: «Եթէ մէկը վիրաւորուելու ըլլայ վայրը գործածելու ընթացքին, մարդիկ կրնան եկեղեցին տուգանքի ենթարկել»: Թէեւ եկեղեցիի հոգաբարձութիւնը կը դժկամի մարդուն առաջարկին, սակայն մարդը կը համոզէ զիրենք որ առնուազն նշան մը դնեն դուրսը, թէ այդ վայրը անձնական կալուած է: Ցուցատախտակը կ'ըսէր.— «Ազգաբարձութիւն: Ով որ կը գործածէ այս վայրը, կրնայ որեւէ ատեն շրջապատուիլ զինք սիրող մարդոցմով»: Ես այդ ցուցատախտակի գրութիւնը կարդացի հոն դրուելէն շաբաթ մը ետք եւ հմայուեցայ: Ես ինծի ըսի.— «Անգամ մը եւս շնորհքը յաղթեց օրէնքին»:

Մեր ընկերը մեր անձին պէս սիրելը կը ծագի Աստուծոյ մեզի հանդէպ ունեցած ազնուութենէն, կարեկցութենէն եւ համբերութենէն: Օրէնքը չէ, այլ միայն Աստուծոյ ազնուութիւնն ու շնորհքն է, որ մարդոց կը տանի ապաշխարութեան (Հռովմ. 2. 4) եւ փրկարար հաւատքի, իր Որդւոյն՝ Յիսուս Քրիստոսի միջոցաւ:

Սէրը մագնիս մըն է, որ հաւատացեալները իրարու քով կը բերէ եւ կը հրապուրէ ոչ հաւատացեալները Քրիստոսի:

**Բ**արեկամներէս մէկը հոգեւոր հովիւն է լեռնային շրջանի մը մէկ փոքր եկեղեցիին, Այտահօ նահանգին մէջ: Եկեղեցին կը գտնուի անտառոտ շրջանի մը մէջ, որու մէջէն ոլորապտոյտ գետ մը կը հոսի: Եկեղեցիին ետեւը եւ գետին եզերքը կայ ուռենիներու պզտիկ պուրակ մը, կանաչ խոտի տարածութիւն մը եւ աւազէ գետափ մը: Գեղեցիկ վայր մը, ուր շրջանի ընտանիքները կը հաւաքուին եւ կ'ուսնենան իրենց պտոյտը:

Օր մը, եկեղեցիէն մէկը իր մտահոգութիւնը կը յայտնէ դուրսէն եկող մարդոց պտոյտի այդ գեղեցիկ վայրը գործածելու օրինականու-

## Մեր Կախեալ Ըլլալը

Կարդա՛  
Ա. Յովհ. 2. 24 - 3. 3

Վասնզի Անով  
կ'ապրիցք եւ կը  
շարժիցք ու կանք:  
—Գործք 17. 28

ԱՍՏՈՒԾԱՆՈՒՆԵՐԻ ՄԷԿ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ  
■ Ա. Մնացորդաց 19-21  
■ Յովհ. 8. 1-27

րինք եւ կը շարժինք ու կանգ» (Գործք 17. 28): Աստուած է, որ մեզի կը Հայթայթէ մեր շնչած օդը: Ան նաեւ կը Հողայ մեր Հողեկան կարիքները եւ «Իր ճոխութեան չափով պիտի լեցնէ մեր կարիքները... փառքով Յիսուս Քրիստոսի ձեռքով» (Փիլիպ. 4. 19):

Մենք պէտք ունինք մեր Երկնաւոր Հօր Իր խաղաղութեան Համար՝ մեր տազնապներու ընթացքին (Յովհ. 16. 33): Պէտք ունինք Իր սիրոյն (Ա. Յովհ. 3. 1), Իր օգնութեան՝ երբ տկար կը զգանք (Սաղմ. 46. 1, Եբր. 4, 16): Ան մեզի յաղթանակ կ'ապահովէ փորձութեան ընթացքին (Ա. Կորնթ. 10. 13), թողութիւն կը պարգեւէ (Ա. Յովհ. 1. 9), նպատակ կու տայ մեր կեանքին (Երեմ. 29. 11), եւ յաւիտեանական կեանք (Յովհ. 10. 28): Առանց Իրեն «բան մը չենք կրնար ընել» (Յովհ. 15. 5): Մեր Երկնաւոր Հօրմէն կը ստանանք ամէն տեսակի շնորհքներ ու օրհնութիւններ (Յովհ. 1. 16): Մենք կարիքը ունինք մեր Երկնաւոր Հօր Հողածութեան, ինչպէս նորածինը Իր ծնողքին:

**Մ**ինչ կ'ուրախանայինք եղբօրս մտածել, թէ որքան աշխատանք պէտք էր Հող տանելու նորածին մանուկի մը: Անոնք ամբողջութեամբ ծնողներէ կախեալ կարիքաւոր փոքր արարածներ են: Անոնք պէտք ունին կերակրուելու, Հագուելու, գրկուելու: Անոնք անկարող են իրենք իրենց Հող տանելու եւ կախեալ են իրենց շուրջը գտնուող մեծերէն:

Մենք չափահասներս ալ ենթակայ մանուկներ ենք՝ կախեալ մեր Երկնաւոր Հօրմէն: Ի՞նչ բանի պէտք ունինք Իրմէ, որ մենք չենք կրնար մենք մեր միջոցներով Հայթայթել մեզի Համար: «Վասնզի Անով կ'ապ-

Աստուծմէ կախեալ ըլլալը տկարութիւն չէ, այլ գիտակցիլ է Անոր հայրութեան եւ զօրութեան:

## Պարզաբանել

Կարդա՛  
Մատթեոս 6. 25-34

Ուտի վաղուան համար  
հոգ մի՛ ընէք, վասնզի  
վաղուան օրը իրեց  
համար հոգ պիտի ընէ,  
հերիք է օրուան  
ճեղուծիւնը:  
—Մատթեոս 6. 34

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՆԵՐ ՄԷ՛Կ  
ՏԱՐՈՒՆ, ՄԷ՛Ջ  
■ Ա. Մնացորդաց 22-24  
■ Յովհ. 8. 28-59

**Զ**այնասիւիւռի Հարցազրոյցի մը  
ընթացքին, պասքէթպոլի փայ-  
լուն խաղցողի մը կը Հարցուի, թէ  
ի՞նչպէս կրնար իր Հանդարտութիւ-  
նը պահել, երբ խումբին յաղթա-  
նակը կախեալ էր իր վերջին գնդա-  
կին նետելէն: Մարզիկին պատաս-  
խանը կ'ըլլայ, թէ նման պարագա-  
ներու տակ, ինք միշտ կացութիւնը  
չատ պարզ կը նկատէ: «Միայն մէկ  
նետել ունիս, եւ որքան կարելի է,  
բնական պէտք է նկատել զայն» կը  
պատասխանէ ան: Մէկ նետել: Այդ  
է Հիմնական սկզբունքը պարզաբա-  
նելու Համար դժուարին կացութիւն  
մը: Պէտք է կեդրոնանալ այն բանին  
վրայ, որ կայ մեր առջեւ այդ վայր-

կեանին: Մի՛ մտահոգուիր մարզիչին կամ խաղընկերնե-  
րուդ ակնկալութիւններով: Պարզաբանէ:

Ընդունելէ ետք, թէ կեանքի մարտահրաւէրները կրնան  
երբեմն շատ ճնշող եւ հեղձուցիչ ըլլալ, Յիսուս կը պատուիրէ  
մեզի, որ Հարցերը ձեռք առնենք, զանոնք աւելի պարզա-  
բանելով - «Ուտի վաղուան Համար Հոգ մի՛ ընէք, վասնզի  
վաղուան օրը իրեն Համար Հոգ պիտի ընէ, Հերիք է  
օրուան իր նեղութիւնը» (Մատթ. 6. 34): Այս էր Յիսուսի  
իմաստուն եզրակացութիւնը իր՝ յաճախ մեզ տկարացնող  
մտահոգութեան մասին կատարած ուսուցումին: Մտահո-  
գութիւնը դրական բան մը չի կրնար իրագործել, այլ  
մեզի աւելի կը թաղէ մեր դիմազրաւած նեղութիւննե-  
րուն մէջ: Հարցերը պէտք է դիմազրաւել մէկ առ մէկ,  
օրը՝ օրին, եւ ապա վստահիլ Աստուծոյ, որ մեզի օգնէ  
իմաստութեամբ վերաբերելու անոնց հետ:

Եթէ կը զգաս թէ կեանքը կ'ընկճէ քեզ, ըրէ ինչ որ  
կրնաս այսօր, եւ ապա մնացածը վստահէ Աստուծոյ:

---

Ներկայ կեանքը ապրելու ուրախութիւնը կը  
կորսնցնենք երբ կը սկսինք ապագայով մտահոգուիլ:

## Իսկական Մրցանակը

Կարդա՛  
Եփեսացիս 5. 22-33

Այրեր, սիրեցե՛ք ձեր  
կիցերը՝ ինչպէս  
Քրիստոս ալ սիրեց  
Եկեղեցի՞ն ու Իր անձը  
մատուցեց անոր համար:  
—Եփեսացիս 5. 25

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՆԵՐ ԱԷԿ  
ՏԱՐՈՒՆ, ՄԷՋ  
■ Ա. Մնացորդաց 25-27  
■ Յովհ. 9. 1-23

2010-ի աւարտական մրցաշարքի ընթացքին, վերջին հարուածով երբ շահեցաւ բարձրագոյն մրցանակը՝ երրորդ անգամ ըլլալով, մեծ ազդեցութիւն գործեց վրաս: Այդ ազդեցութիւնը իր վերջին յաղթական հարուածէն ետք, կանաչ խոտին վրայ ցատկիւր չէր, այլ ժողովուրդին մէջէն ճամբայ գտնելով վազելն էր դէպի իր կնոջ, որ քաղցկեղի դէմ կը պայքարէր: Լուսանկարչական մեքենան նկարեց այն արցունքները, որոնք առատորէն կը հոսէին Ֆիլի աչքերէն, երբ ան իր կինը գրկած մնաց երկար ժամանակ:

Մեր կիները պէտք ունին զգալու այն գոհաբերող եւ անձնուէր սէրը, որ մեր հոգիները Սիրողը ցոյց տուած է մեզի հանդէպ: Ինչպէս Առաքեալը կը պատուիրէ.— «Այրեր, սիրեցե՛ք ձեր կիները, ինչպէս Քրիստոսն ալ սիրեց Եկեղեցին ու իր անձը մատուցեց անոր համար» (Եփես. 5. 25):

Մրցանակներ կու գան ու կ'երթան, սակայն, ամէնէն կարեւորը շուրջդ գտնուող մարդիկն են, որոնց դուն կը սիրես եւ որոնք քեզ կը սիրեն:

Կեանքը մեր մրցանակներ շահելուն մասին չէ, այլ այն մարդոց՝ որոնց կը սիրենք:

**Կ**ը հիանամ տիկնոջս՝ մեր զաւակներուն վրայ ունեցած ազդեցութեան վրայ: Քիչ կոչումներ կան, որոնք այդքան առանց պայմանի գոհաբերութիւն, յարատեւութիւն եւ նուիրում կը պահանջեն, որքան մայրութիւնը: Ես վստահ եմ, թէ նկարագրիս եւ հաւատքիս կազմութեան մէջ որքա՛ն մեծ դեր ունեցած է մայրս: Պահ մը երեւակայենք, իւրաքանչիւրս՝ ո՞վ կրնայինք ըլլալ, եթէ չըլլային մեր կիները եւ մայրերը:

Այս պարագան ինծի կը յիշեցնէ իմ ամէնէն նախասիրած յիշատակներէս մէկը մարզական պատմութեան մէջ: Ֆիլ Միքըլսըն, կոլֆի

## Վատահուլթիւն Եւ Տխրութիւն

Կարդա՛  
Բ. Կորնթ. 1. 3-11

Ծիծաղելու ատեն ալ  
մարդուս սիրտը  
տրտմութիւնը կը զգայ:  
— Առակաց 14. 13

ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆԵՐԻ ԵՐ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ

■ Ա. Մնացորդաց 28-29  
■ Յովհ. 9. 24-41

ամէնէն բարձր պահերուն, տխրութիւն մը կը զգայինք մեր փոքր աղջկան բացակայութեան պատճառով:

Երբ մտածեմ այդ օրուայ մասին, կը զգամ, թէ այդ օրուան մեր տխրութիւնը որոշ չափով նման էր այսօրուայ մեր տխրութեան, երբ Մելիսան այլեւս մեզի հետ չէ: Այդ խաղէն ութը տարիներ ետք, ինքնաշարժի արկածով մը ան մահացաւ: Մինչ փառք կու տանք Աստուծոյ իր օգնութեան եւ «ամէն մխիթարութեան Աստուածը» ըլլալուն համար (Բ. Կորնթ. 1. 3), սակայն, նոյնիսկ այդ մեծ մխիթարութիւնը չի կրնար փոխել մեր սիրելի աղջկան պարապ մնացած աթոռը մեր ընտանիքէն ներս: Աստուծոյ Խօսքը չըսեր, թէ Աստուած մեր տխրութիւնը կը ջնջէ այս կեանքի մէջ, բայց կ'ըսէ, թէ Աստուած հաւատարիմ է եւ կը մխիթարէ մեզ: Եթէ սիրելի մը կորսնցուցած ես, ապաւինէ Աստուծոյ մխիթարութեան: Շարունակէ վստահիլ իրեն: Բնական է տխուր զգալ այդ բացակայութեան համար: Սակայն Աստուծոյ մխիթարութիւնը բաւարար է:

Երկիրը չունի վիշտ մը, որ երկինքը չզգայ զայն:

Նաւապետից  
Ուղեցոյցը

Կարդա՛  
Սաղմոս 119. 129-136

Իմ գնացքներս քաստա-  
տէ՛ Քու Խօսքիդ մէջ:  
—Սաղմոս 119. 133

ԱՍՏՈՒԾԱԵՆՈՒՆԵՐԸ ՄԷ՛Կ  
ՏԱՐՈՒՆ, ՄԷ՛Ջ  
■ Բ. Մնացորդաց 1-3  
■ Յովհ. 10. 1-23

Հեռու մնալ դժուարին եւ վտանգաւոր ջուրերէ:

Շատ մը ձեւերով, հաւատացեալի մեր կեանքն ալ նման է ծովային ճամբորդութեան մը, եւ հաւատացեալներ պէտք ունին օգնութեան, նաւարկելու համար կեանքի վտանգաւոր ծովերուն վրայ: Մենք ունինք այդ օգնութիւնը, որովհետեւ Աստուած մեզի տուած է Իր գիրքը՝ Աստուծոյ Խօսքը, որպէս մեր ուղեցոյցը: Սաղմոսերգուն կ'ըսէ, թէ վտանգները ոչ միայն արտաքին երեւոյթներու մէջ կը գտնուին, այլ նաեւ մեր մեղանչելու այդ միտումին եւ փորձութեան մէջ: Անոր համար ան կ'ըսէ Աստուծոյ. — «Իմ քայլերս ուղղէ քու Խօսքովդ, ու ոչ մէկ անօրէնութիւն թող չտիրէ ինծի» (Սաղմ. 119. 133):

Երբ սերտենք Աստուածաշունչը, կը զգանք Աստուծոյ առաջնորդութիւնը՝ անցեալէն մինչեւ այսօր: Կը զգանք նաեւ այդ Խօսքին մեզի զգուշացնելը մեղանչական ճամբաներու մէջ իյնալէ: Աստուծոյ Խօսքը միշտ մեր ոտքերուն ճրագ եւ մեր շաւիղներուն լոյս է (Սաղմ. 119. 105):

Երբ ունիմք Աստուծոյ Խօսքը որպէս մեր քարտէսը եւ Սուրբ Հոգիմ՝ մեր կողմնացոյցը, երբեք պիտի չմոլորիմք:

**Մ**ովային մեծ հետախուզու-  
թեան ընթացքին՝ 15-16-րդ դա-  
րերուն, անհամար թիւով նաւեր  
ճեղքեցին վտանգաւոր ովկիանոսներ  
եւ հասան անձանօթ ծովեզերքներ:  
Նաւապետներ կը գործածէին նա-  
ւարկելու յատուկ միջոցներ, որոնց  
մէջ կար գիրք մը, որ կը կոչուէր  
Ռաթըր: Այդ գիրքը Հին գիրք մըն  
էր, որուն մէջ անցեալին, նաւապետ-  
ներ եւ ճամբորդներ օրագրած էին  
իրենց պատահած դէպքերն ու փոր-  
ձառութիւնները, որ պատահած էր  
երբ կ'անցնէին դժուար նաւարկելի  
եւ անձանօթ ջուրերու մէջէն: Այդ  
գիրքին օրագրութիւնները կարդա-  
լով, յաճախ նաւապետներ կ'ընային

## Մտիկ Կ'ընե՞ս

Կարդա՛  
ԹՈՒՆԳ 20. 1-13

Անոնց աչքերուն առջեւ  
ըսէք ապառաժից ու իր  
ջուրը պիտի տայ:  
—ԹՈՒՆԳ 20. 8

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՆԵՐԻ ՄԷԿ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՋ

- Բ. Մնացորդաց 4-6
- Յովհ. 10. 24-42

նախկին սերունդը, նոյն գանգատները ըրած էր - «Չուր  
չկայ»: Աստուած ըսած էր Մովսէսի, որ գաւազանը ժայռի  
մը զարնէ անկէ Չուր բերելու համար (Ելից 17. 6): Երբ  
Մովսէս հնազանդեցաւ, առատ Չուր ցայտեց ժայռէն: Երբ,  
տարիներ ետք տրտնջալը նորէն սկսաւ, Մովսէս նոյն բանը  
ըրաւ, որ արդիւնք տուած էր: Սակայն, այս երկրորդ  
անգամ, Մովսէս ըսաւ Իսրայէլի ժողովուրդին բան մը  
ընել - մտիկ ընել: Բան մը որ ինք անձնապէս չէր ըրած:  
Աստուած ըսած էր Մովսէսի, որ փոխանակ զարնելու  
ժայռին, «խօսի» անոր հետ:

Երբեմն երբ մենք մեզի տկար եւ ջղային կը զգանք,  
չատ մօտէն ուշադրութիւն չենք դարձներ Աստուծոյ:  
Կ'ենթադրենք, թէ Ան կը գործէ միշտ միեւնոյն ձեւով:  
Սակայն, իրողութիւնը այդպէս չէ: Երբեմն Ան մեզի  
կ'ըսէ, որ գործի անցնինք: Երբեմն կ'ըսէ, որ խօսինք, եւ  
երբեմն ալ՝ սպասենք: Ասոր համար է, որ մենք պէտք է  
միշտ ուշադիր ըլլանք մտիկ ընելու՝ գործ մը ընելէ առաջ:

Մտիկ ըրէ՛ - Յետոյ հնազանդէ՛:

**Ա**ն յուսախաբուած էր: Բարկացած:  
Յոգնած էր մեղադրուելէ՝ այն  
ամէն բաներուն համար, որոնք  
ձախող կ'ընթանային: Տարիներ յա-  
ջորդաբար ստացած էր այդ մեղադ-  
րանքները, մէկ աղէտէն միւսը: Ան  
չարունակ կը միջամտէր, գիրենք  
նեղութենէ հեռու պահելու համար:  
Սակայն, այդ բոլոր ջանքերուն փո-  
խարէն, ան աւելի ցաւ ստացած էր:  
Ի վերջոյ, օր մը աստիկ գայրացած  
ըսաւ.- «Լսեցէ՛ք հիմա ո՛վ ապատամբ-  
ներ, ձեզի այս ապառաժէն Չուր  
պիտի հանենք» (ԹՈՒՆԳ 20. 10):

Այդ թելադրութիւնը կրնար  
անբնական թուիլ, բայց այնպէս  
չեղաւ: Քառասուն տարիներ առաջ,

Շարունակել  
Զարմանալ

Կարդա՛  
Բ. Պետրոս 1. 2-11

Քանի որ այս բաները ձեր վրայ կը գտնուի՞ն ու կ'աճի՞ն, պարապ ու անպտուղ չեն ընել ձեզ, մեր Տէր Յիսուս Քրիստոսի ճանչնալու մէջ:

—Բ. Պետրոս 1. 8

ԱՍՏՈՒԱԾԱԸՆՈՒԹՅՈՒՆ  
ՏԱՐՈՒՆ, ՄԷՋ

- Բ. Մնացորդաց 7-9
- Յովհ. 11. 1-29

**Վ**երջերս, ճամբորդութեան մը ընթացքին, կինս նստած էր մօր մը մօտ՝ իր պզտիկ տղեկին հետ, որ առաջին անգամ օդանաւով կը ճամբորդէր: Հազիւ օդանաւը բարձրացաւ, տղեկը բացականչեց.— «Մամա՛, տես որքա՛ն բարձրացանք: Ամէն բան պզտիկ կ'երեւի»: Մի քանի վայրկեաններ ետք ան պոռաց.— «Իրա՞ւ այդ ամպերը հոն կը գտնուին: Ի՞նչ կ'ընեն անոնք մեր տակը»: Քիչ ետք, ճամբորդներէն ոմանք սկսան կարդալ, ուրիշներ մրափել, ուրիշներ ալ իրենց պատուհանի վարագոյրը իջեցնելով դիտել ցուցադրուած Ֆիլմ մը: Այդ տղեկը սակայն, մնաց կաշած պատուհանին եւ գրաւուած

այն բոլոր զարմանալի բաներով, որ կը տեսնէր դուրսը:

Քրիստոնէական կեանքին մէջ փորձառու ճամբորդներու համար մեծ վտանգ է չնկատել այն հրաշալիքները, որոնց կը հանդիպինք: Աստուծոյ Խօսքը, որ ատեն մը մեզի այնքան խանդավառած էր, կը դառնայ աւելի ծանօթ եւ ակադեմական: Երբեմն կ'իյնանք սովորութիւն դարձած մտքով աղօթելու վիճակի մը մէջ եւ ոչ թէ մեր սրտով:

Պետրոս Առաքեալ կը պատուիրէ առաջին դարու հաւատացեալներուն, որ շարունակեն աճիլ հաւատքի մէջ եւ այդ հաւատքի աճումի ընթացքին աւելցնեն առաքինութիւն, գիտութիւն, ժուժկալուծիւն, համբերութիւն, աստուածապաշտութիւն, եղբայրասիրութիւն եւ սէր (Բ. Պետ. 1. 5-7): Առաքեալը կ'ըսէ.— «Քանի որ այս բաները ձեր վրայ կը գտնուին ու կ'աճին, պարապ ու անպտուղ չեն ըներ ձեզ, մեր Տէր Յիսուս Քրիստոսը ճանչնալու մէջ» (Կ. 8): Առանց անոնց մենք կոյր կը դառնանք եւ կը մոռնանք մեր մեղքերէն մաքրուիլ (Կ. 9):

Շարունակաբար մեծնալը Քրիստոսով կարելի կը դառնայ ԶինՖ աւելի խորապէս փանչնալով:

Թող Պատիւը  
Հանդիպի Պատիւին

Կարդա՛  
Մատթէոս 6. 1-6

Զգոյշ եղէք որ ձեր ողորմութիւնը մարդոց առջև չընէք՝ անոնց երեւնալու համար, եթէ ոչ վարձք չէք առներ ձեր հօրմէն որ երկիւնքն է:

—Մատթէոս 6. 1

ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՆԵՐ ՄԷ՛Ջ  
ՏԱՐՈՒՆ ՄԷ՛Ջ

■ Բ. Մնացորդաց 10-12

■ Յովհ. 11. 30-57

Ֆոթոգրաֆիկ մը տեղի ունեցաւ Վաշինկթընի մէջ եւ պահակներուն ըստեցաւ ձգել իրենց գործը եւ ապաստան գտնել տան մը մէջ, մինչեւ փոթորիկին անցնիլը: Ի՛նչ զարմանք սակայն, պահակները մերժեցին այդ առաջարկը եւ անձնուիրաբար իրենց պաշտօնին վրայ մնացին, յարգելու համար իրենց նահատակ զինուոր ընկերներուն, նոյնիսկ ահաւոր փոթորիկի ընթացքին:

Շեշտելով Յիսուսի ուսուցումները, Մատթ. 6. 1-6-ի մէջ արձանագրուած, ես կը հաւատամ, Յիսուս կ'ոզէ, որ մենք ապրինք առանց թուլնալու, անձնուէր եւ իրեն նուիրուած կեանք մը: Աստուծոյ Խօսքը կոչ կ'ընէ մեզի ապրելու բարի գործերով՝ Սուրբ, աստուածապաշտութեան եւ հնազանդութեան կեանք մը (Կ. 4-6), ոչ ցուցամոլութեամբ եւ մարդոցմէ փառաբանուելու նպատակով (Կ. 2): Պօղոս Առաքեալ կը պատուիրէ, որ մեր կեանքը ամբողջութեամբ հպատակ դարձնենք Աստուծոյ եւ մեր մարմինները «կենդանի գոհ» (Հռովմ. 12. 1):

Որքան աւելի ծառայեմք Յիսուսի, այնքան աւելի  
քիչ պիտի ծառայեմք մեմք մեր անձին:

## ԳԷՉ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Կարդա՛  
Յայտնութիւն 20. 11-15

Երկրի հողին մէջ  
քնացողներուն շատերը  
պիտի արթննան, ոմանք  
յաւիտեակական կեանքի  
համար, ոմանք ալ նա-  
խատինքի ու յաւիտեակա-  
կան անարգանքի համար:  
—Դանիէլ 12. 2

ԱՍՏՈՒԱԾԱԵՆՈՒՆԸՆԸ ՄԷՉ  
ՏԱՐՈՒՆ ՄԷՉ

- Բ. Մնացորդաց 13-14
- Յովհ. 12. 1-26

Գտնուելը աւելի նախընտրելի է: Լսած եմ երբեմն ուրիշ մարդոցմէ, որոնք կը նախընտրեն դժոխք երթալ, քանի որ իրենց բոլոր բարեկամները հոն պիտի ըլլան: Մարդ մը գրած է.— «Եթէ դժոխքը իրականութիւն է, չեմ խորհիր, որ անիկա գէշ տեղ մը ըլլալու է: Մեծ թիւով հետաքրքրական մարդիկ պիտի ըլլան այնտեղ»:

Ինչպէ՞ս կրնանք համոզել մարդոց, որոնք այդպէս խաբուած ըլլալով կարենան խուսափիլ դժոխքի սարսափէն: Թերեւս խօսելով իրենց դժոխքի իրականութեան մասին, որ մեզի կը ներկայացնէ Աստուծոյ Խօսքը: Դանիէլի գիրքը զայն կը նկարագրէ տեղ մը լեցուն «Նախատինքով եւ յաւիտեակական անարգանքով» (12. 2): Ղուկաս 16. 23-ը կը խօսի «տանջանք»ի մասին: Մատթէոս 8. 12-ը կը նկարագրէ զայն որպէս «լալու եւ ակռաները կրճտելու» վայր:

Աստուածաշունչը երբեք չի թելադրեր, որ մարդիկ մտածեն, թէ դժոխքը լաւ տեղ մըն է: Գէշ ընտրութիւն է Յիսուսը մերժելով ընդունիլ Սատանային իշխանութիւնը:

Հեռատեսիլի տարեց աստղի մը կը հարցուի երկինքի մասին: Հարցազրոյցը վարողը հարցումը կը սկսի մեծ աւետարանիչ Պիլի Կրահամի խօսքով, թէ ան գիտէր ինչ պիտի ըլլար այս կեանքէն ետք: Իրեն կը սպասէր դրախտը: Ինք երկինք պիտի երթար: Ապա կը հարցնէ հիւրին.— «Դո՞ն ինչ բանի կը հաւատաս»: Ան կը պատասխանէ.— «Ես գործունէութիւններով լեցուն տեղեր կը սիրեմ: Երկինքը շատ հանդարտ տեղ մըն է ինծի համար: Շատ բան կայ ընելիք դժոխքին մէջ»:

Դժբախտաբար այս մարդը առանձին չէ մտածելու, թէ Սատանային իշխանութեան տակ

Նոյն Քրիստոսը, որ կը խօսի երկինքի փառաւորութեան մասին, կը նկարագրէ նաեւ դժոխքի սարսափելի վայր մը ըլլալը: